Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգ

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգը ՀՀ ԿԲ -ի առաջին միջբանկային վճարային համակարգն է: Համակարգի սեփականատեր և օպերատոր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը, որը միևնույն ժամանակ վերահսկում և կարգավորում է համակարգի գործունեությունը, մշակում է համակարգի զարգացման քաղաքականությունը և ապահովում է դրա իրականացումը: Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգն իրենից ներկայացնում է հաշվարկների իրակա-նացման համախառն համակարգ, որի միջոցով վճարումները նախաձեռնվում են թղթային եղանակով, իսկ հաշվարկը կատարվում է նույն օրը, այն վերջնական է և անվերադարձ: Համակարգում վճարային հաղորդագրությունների հոսքերի կառուցվածքը V տիպի է:

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգի մասնակիցներ են հանդիսանում ՀՀ ԿԲ-ի բոլոր հաճախորդները, որոնք բանկային, թղթակցային, կամ հատուկ քլիրինգային հաշիվ ունեն ՀՀ կենտրոնական բանկում:

Համակարգով իրականացվում են ինչպես կենտրոնական բանկի սեփական վճարումները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի (վճարման հանձնարարականների, պահանջագրերի, չեկերի) հիման վրա կատարվող անկանխիկ վճարումները և կանխիկի մուտքագրումներն ու դուրսգրումները:

Վճարային փաստաթղթերի տվյալները ձեռքով մուտքագրվում են «Գործառնական օր» ծրագրային համակարգ, որտեղ կատարվում է վերջնահաշվարկը: Վերջնահաշվարկը կատարվում է վճարողի հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում՝ դեբետագրելով վճարողի և կրեդիտագրելով ստացողի հաշիվները, ինչից հետո վճարը դառնում է վերջնական և անվերադարձելի: Եթե վճարողի հաշվի վրա բավարար միջոցներ չկան, ապա վճարման ներկայացված փաստաթուղթը մերժվում է և հետ է վերադարձվում այն ներկայացնողին:

Վճարային փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում հիմնականում նույն օրը կատարելու համար, սակայն կարող են ներկայացվել նաև ավելի ուշ կատարման օր պարունակող վճարային փաստաթղթեր: ՀՀ կենտրոնական բանկի համախառն հաշվարկների թղթային համակարգը գործում է ժամը 9.30-ից մինչև 17.00-ը: Ընդ որում վճարային փաստաթղթերը հաճախորդների կողմից ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում ժամը 9.30-ից մինչև 16.00-ը, իսկ վճարային փաստաթղթերի մշակումը և հաշվարկների իրականացումը տևում է մինչև ժամը 17.00-ը: